

**ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ ԵՎ ՀԱՆՑԱԿԱԶՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՑԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ԿԱՏԱՐԿԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՄԱՆ ՀԻՄՔ***

Յուրի Հարությունյան

*Քանայի բառեր*¹ քրեական օրենք, դիսպոզիցիա, հանցակազմ, հանցագործությունների որակում, հանցակցություն:

Սույն հոդվածում ուսումնասիրվում են քրեական օրենքի և հանցակազմի դերն ու նշանակությունը մասնավորապես հանցակցությամբ կատարված հանցագործությունների որակման հարցում: Առանձնակի ուշադրության են արժանացել Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության դատական պրակտիկայի պարզաբանումները:

Հանցագործության որակման բնորոշումը, որպես լեալ կատարված արարքի իրավաբանական նշանակալի հատկանիշների և քրեական օրենսգրքի նորմերում ամրապնդված այդ տեսակի հանցագործության հանցակազմի հատկանիշների նույնության սահմանումը և իրավաբանական ամրապնդումը, կանխորոշում է քրեական օրենքի նշանակությունը՝ որպես հանցագործության որակման իրավաբանական հիմք: Հանցագործության որակման ընթացքում համադրումը և նույնության սահմանումը իրականացվում է ոչ թե հանցագործության՝ ինչ-որ գիտական բնորոշում կամ դատական պրակտիկայում ձևավորված (մշակված) բնորոշման, այլ միայն այդ տեսակի հանցագործության օրենսդրական մոդելի հիման վրա [1]: Հենց քրեական օրենքին է բովանդակում հանցագործության յուրաքանչյուր տեսակի կամ հանցակազմի ինֆորմացիոն մոդելը [2]:

Հանցակազմը գիտական արստրակցիա է, որը իրենից ներկայացնում է քրեական օրենքով նախատեսված, հանրորեն վտանգավոր արարքը՝ որպես հանցագործությունը բնութագրող օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների համակցություն: Կոնկրետ տեսակի հանցագործության օրենսդրական մոդելը ստեղծելով՝ օրենսդիրը ոչ տիպիկ, մասնավոր հատկանիշներից, առանձին հանցավոր արարքների առանձնահատկություններից վերացականացնում և քրեական օրենքում ամրապնդում է միայն անհրաժեշտ հատկանիշների նվազագույն հավաքածու, որը անխուսափելիորեն կրկնվում է տվյալ տեսակի ցանկացած հանցագործության կատարման ժամանակ և հանդիսանում է անհրաժեշտ ու բավարար՝ անձին որոշակի տեսակի հանցագործության կատարման մեջ մեղավոր ճանաչելու համար:

Գրականության մեջ հանցակազմի հատկանիշը բնորոշվում է որպես տվյալ տեսակի բոլոր հանցագործություններին ներհատուկ, ընդհանրացված իրավաբանորեն նշանակալի հատկություն [3]: Հանցակազմի բոլոր հատկանիշները այս կամ այն ձևով պարունակվում են քրեիրավական նորմում, սակայն քրեական օրենսգրքի Հատուկ մասի ոչ մի հոդված չի պարունակում հանցակազմի բոլոր հատկանիշները: Այս կամ այն հանցակազմի համար առանձնահատուկ, էական և տարբերիչ հատկանիշները բովանդակում են քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածում, իսկ բոլոր հանցագործությունների համար ընդհանուր հատկանիշը օրենսդիրը առանձնացրել է քրեական օրենսգրքի Ընդհանուր մասում: Այսպես՝ քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքը, մեղսունակության հատկանիշները, մեղքի տեսակների և ձևերի բնութա-

* Հոդվածն ընդունվել է 26.02.21:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ի.գ.դ., պրոֆեսոր Ս. Ծաղիկյանը: 29.02.21:

գիրը և այլն, իմաստ չունի մատնանշել յուրաքանչյուր հողվածում, որպիսի խուսափենք անհարկի կրկնություններից, այդ իսկ պատճառով նրանք ամրապնդվում են քրեական օրենսգրքի ընդհանուր մասում, ինչպես անավարտ հանցագործության առանձնահատուկ հատկանիշները (ՀՀ քրեական օրենսգրքի 34 և 35 հոդվածները) կամ հանցակցությունը (ՀՀ քր. Օր.ի 37 հոդված): Այս կապակցությամբ չի կարելի համաձայնել մի քանի հեղինակների կողմից քրեիրավական նորմերի և քրեական օրենսգրքի Հատուկ մասի հողվածի դիսպոզիցիայի միջև անցկացվող նույնացման հետ [4]: Քրեական օրենքի կառուցումը բլանկետային դիսպոզիցիայի օգտագործման, մասնագետների միջև վեճեր է առաջացնում, թե բլանկետային դիսպոզիցիան պարունակում է արդյոք հանցակազմի բոլոր հատկանիշները, թե միայն մի մասը, արդյոք նորմատիվ ակտերը, որոնց վրա հղում է կատարում բլանկետային դիսպոզիցիան, քրեական իրավունքի աղբյուրներ հանդիսանում են, թե ոչ: Լ. Դ. Գաուխմանի կարծիքով՝ հանցակազմի հատկանիշները նախատեսվում են ոչ միայն քրեական օրենքում, քրեական օրենսգրքի հատուկ մասի հողվածում և Ընդհանուր մասի հողվածում այլ նաև ոչ քրեական օրենքներում կամ այլ նորմատիվ իրավական ակտերում, որոնց վրա հղում է կատարված քրեական օրենսգրքի Հատուկ մասի հողվածների բլանկետային դիսպոզիցիաներում [5]: Դրա հետ կապված՝ նա պնդում է, որ հանցագործության որակման դեպքում անհրաժեշտ է պարզել կատարված արարքի հատկանիշների և ոչ միայն քրեական օրենքում, այլ նաև ուրիշ օրենքներում (կամ ուրիշ նորմատիվ իրավական ակտում) ամրապնդված հանցակազմի հատկանիշների միջև ճիշտ համապատասխանությունը: Թվում է, որ բլանկետային դիսպոզիցիաներում հանցավոր արարքի հատկանիշները միայն մանրամասնվում է այլ օրենսդրական ակտերի նորմատիվային պատվերի միջնորդությամբ: Բլանկետային դիսպոզիցիան միացնում է տարբեր ճյուղային պատկանելիության նորմատիվային բաղադրամասերը՝ թևավորելով լիովին ինքնուրույն նորմ, հատուկ իրավաբանական կազմություն, բայց այն ունի քրեիրավական նորմի բոլոր հատկանիշները, որոնք անմիջականորեն ձևավորված են քրեական օրենքում [6]: Այսպիսով՝ հանցակազմի հատկանիշներ չեն կարող ձևավորվել իրավունքի ուրիշ ճյուղի նորմերում: Հանցագործության որակման համար անհրաժեշտություն չկա հղում կատարել այդպիսի նորմերի վրա, դրանք միայն անհրաժեշտ են նրա հիմնավորման համար:

Հղումը այլ նորմատիվ ակտերի վրա, որպես ապացույց, պետք է ընդգրկվի միայն մեղադրական դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում (ՀՀ քր. դատ. օր.-ի 358-րդ հոդվածի 2-րդ մաս) [7]: Դատավճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի հղում միայն քրեական օրենքի վրա:

Քրեական օրենքի կառուցման դեպքում օրենսդրական տեխնիկայի հնարների օգտագործումը հանգեցնում է նրան, որ հանցակազմի մի որոշ հատկանիշներ օրենքում ձևավորված են դրական ձևով, մյուսները՝ բացասական: Օրենքում արտահայտվածության աստիճանից ելնելով՝ համապատասխանաբար գրականության մեջ առաջարկվում է հանցակազմի հատկանիշները բաժանել դրականների և բացասականների [8]:

Հանցակազմի դրական հատկանիշները արտահայտվում են, այսպես կոչված, դրական հասկացություններում, այն է՝ հասկացություններում, որոնցում արտացոլվում են առարկային ներհատուկ հատկանիշները: Օրինակ՝ սպանության հանցակազմը (ՀՀ քր. օր.-ի 104 հոդ. 1-ին մաս), գողության հանցակազմը (ՀՀ քր. օր.-ի 177 հոդվածի 1-ին մաս) օրենքում նկարագրված են դրական հասկացության օգտագործմամբ: Օրենքում մատնանշված հատկանիշների առկայությունը վկայում է որոշ տեսակի հանցագործության առկայության մասին: Դրա հետ մեկտեղ՝ որոշ հանցակազմերի նկարագրման դեպքում օգտագործվում են բացասական, ժխտական, մերժողական հասկացությունները, որոնցում ընդհանրացնող հատկանիշ է ծառայում նրանցում այս կամ այն դրակի

կամ հատկության բացակայությունը: Այսպես՝ ՀՀ քր. օր-ի 113 հոդվածում խոսքը առողջությանը վնաս պատճառելու մասին է, որը վտանգավոր չէ կյանքի համար և չի առաջացրել ՀՀ քր. օր-ի 112 հոդվածով նախատեսված հետևանքները: Համաձայն ՀՀ քր. օր-ի 188 հոդվածի՝ ապօրինի է հանդիսանում ձեռնարկատիրությունը, որն իրականացվել է մասնավորապես, առանց պետական գրանցման կամ առանց հատուկ թույլտվության (լիցենզիայի):

ՀՀ քր. օր-ի 395 հոդվածի 4-րդ մասում տալով վարձկանի բնորոշումը՝ նշվում է, որ վարձկան է համարվում հատուկ հավաքագրված անձը, որ գործում է նյութական հատուցում ստանալու նպատակով և զինված ընդհարմանը կամ ռազմական գործողություններին մասնակցող պետության քաղաքացի չէ, մշտապես չի բնակվում դրա տարածքում, ընդգրկված չէ ընդհարման մեջ գտնվող պետության զինված ուժերի անձնակազմում և այլ պետության կողմից ուղարկված չէ զինված ուժերի կազմում պաշտոնական պարտականություններ կատարելու համար: Հանցակազմի հատկանիշների մեծամասնությունը ձևավորված են դրական հասկացությունների տեսքով, դրական ձևով, հանցագործության այս կամ այն որակի կամ հատկության մատնանշման տեսքով: Բացասական հատկանիշները պարունակվում են քրեական օրենսգրքի ինչպես Ընդհանուր, այնպես էլ Հատուկ մասերում: Այսպես՝ ՀՀ քր. օր-ի 18-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է դրույթ այն մասին, որ չի հանդիսանում հանցավոր արարք, այն աստիճանի վտանգավորություն չներկայացնող արարք, որը բնորոշ է հանցագործության համար: Անմեղսունակության հասկացությունը ՀՀ քր. օր-ի 25-րդ հոդվածի 1-ին մասում նույնպես ձևավորված է բացասական հասկացության օգտագործմամբ: Հանցակազմը բացառող բացասական հատկանիշները համապատասխանում են ՀՀ քր. օր-ի 42-47 հոդվածներում նախատեսված արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներին: Բացասական հասկացության նախկինում բերված օրինակները վերաբերում էին ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասին: Բացասական հատկանիշները հանցակազմում խաղում են նույնացման դեր, ինչպես որ դրական հատկանիշները նույն չափով կարող են օգտագործվել հանցագործության համար: Այսպես՝ արարքը ՀՀ քր. օր-ի 113-րդ հոդվածում որակելու համար պետք է հավաստել, որ առողջությանը պատճառված վնասը վտանգավոր չէ մարդու կյանքի համար և անձի առողջությանը ծանր վնաս պատճառելը չի: Եթե հանցակազմի հատկանիշը օրենքում ձևավորված է որպես բացասական, թեպ իրականությունում՝ որպես դրական, դա վկայում է որոշ տեսակի հանցագործության հանցակազմի բացակայության մասին: Այսպես՝ եթե կատարված հանցագործության արդյունքը մարդու կյանքի համար վտանգավոր կամ ՀՀ քր. օր-ի 112 հոդվածում նշված հետևանքները առաջացնող, առողջությանը վնաս պատճառելն է հանդիսանում, դա բացառում է արարքի որակումը՝ ՀՀ քր. օր-ի 113-րդ հոդվածով:

Դրա հետ կապված՝ Լ. Դ. Գառուխմանի պնդումը այն մասին, որ «քրեական օրենսդրության Հատուկ մասի նորմերում նախատեսված հանցակազմի նեգատիվ հատկանիշների առկայության դեպքում բացակայում է տվյալ կոնկրետ հանցակազմը» [9] իրենից ձևական տրամաբանության օրենքների խախտում է ներկայացնում:

Օրենքում բացասական հասկացությունների առկայությունը շատ դեպքերում բացատրվում է օրենսդրական տեխնիկայի նկատառումներով: Օրենքում թվարկված դրական հատկանիշները ոչ միշտ կարող են իրականացվել բավարար խնայման եղանակով: Այսպես՝ դրական հասկացությունների օգտագործմամբ ապօրինի արքորտ կատարելու հանցակազմի ձևավորման համար (ՀՀ քր. օր-ի 122 հոդված) անհրաժեշտ կլինեք քրեական օրենքում թվարկել բժշկական բոլոր մասնագիտությունների լրիվ ցանկը, որի ներկայացուցիչները իրավունք չունեն արքորտ կատարելու, որը դժվար թե պրակտիկայում իրականացնելի է: Հանցագործության որակման դեպքում համակցության մեջ օգտագործվում են ինչպես դրական, այնպես էլ բացասական հատկանիշները:

Ինչպես իրավացիորեն պնդում է Վ.Ն.Կուդրյավցևը, որակման դեպքում անթույլատրելի է սահմանափակվել միայն բացասական հատկանիշների սահմանմամբ, և հանցագործությունը որակել «բացառման ճանապարհով»: «Դժվար թե գտնվեր որևէ դատավոր, որը մարդուն դատապարտեր սպանության համար միայն այն հիմքով, որ նրա կատարած գործողություններում չկան ոչ ավագակության, ոչ բանտիդիզմի, ոչ մարմնական վնասվածքների, ոչ բռնաբարության, ոչ դասալքության հատկանիշներ» [10]: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է ընդգծել դրական հատկանիշների դերը, որը հիմք է հանդիսանում հանցակազմի կառուցման և հանցագործության որակման համար: Հանցագործության որակման համար կարևոր է հանցակազմի հատկանիշների բաժանումը մշտականի և փոփոխականի [11]: Մշտական են այնպիսի հատկանիշները, որոնց բովանդակությունը տվյալ քրեական օրենքի գործողության ամբողջ ժամանակի ընթացքում մնում է անփոփոխ և կայաված չէ կատարված հանցագործության կոնկրետ հանգամանքներից: Մշտական են ոչ միայն քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայում նշված հատկանիշները, այլ նաև Ընդհանուր մասի հոդվածներում ձևավորվածները: Մշտական հատկանիշները անփոփոխ են այս կամ այն քրեա-իրավական նորմի գործողության ամբողջ տերիտորիայի վրա և կայուն է կոնկրետ քրեական օրենքի գործողության սահմաններում: Օրենքի փոփոխությունը կարող է հանգեցնել մեկ հատկանիշի փոխարինումը ուրիշով, կամ նրան, որ տվյալ հատկանիշը ձեռք է բերում այլ բովանդակություն: Այսպես՝ 1996թ, ՌԴ քր. օր-ի 222 հոդվածի 1-ին մասը որպես հանցագործության առարկա նախատեսում էր հրազենը՝ չնշելով դրա հատկանիշները: Այս կապակցությամբ թվում է, որ հրազենի տակ պետք էր հասկանալ նաև քաղաքացիական ողորկափող հրազենը: 2003թ. դեկտեմբերի 8-ին ընդունված ՌԴ օրենքով տվյալ հոդվածի խմբագրությունում կատարված փոփոխություններին համապատասխան՝ այդ հանցագործության առարկան հանդիսանում է հրազենը՝ բացառությամբ քաղաքացիական ողորկափող հրազենից, նրա հիմնական մասերից և դրա փամփուշտներից:

Այսպիսով՝ տվյալ ժամանակամիջոցի ամբողջ ընթացքում, երբ օրենքը գործում է առանց փոփոխության, մշտական հատկանիշները նույնպես անփոփոխ են:

Փոփոխական են կոչվում այն հատկանիշները, որոնց բովանդակությունը մեկ քրեական օրենքի գործողության ամբողջ ընթացքում կարող են փոփոխվել առանց քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայի տեքստի փոփոխության: Այդ հատկանիշների բովանդակությունը որոշվում է ոչ միայն հոդվածի (տեղստով) բնագրով, այլ նաև ուրիշ պահերով:

Փոփոխական հատկանիշները լինում են **արժեքավորող** և **բանկետային**:

Արժեքավորող հատկանիշների բովանդակությունը նշանակալի չափով որոշվում է քրեական օրենքը կիրառող անձի իրավագիտակցությամբ: Վ.Ն. Կուդրյավցևը, պատկերավոր կերպով բնութագրելով արժեքավորող հատկանիշների բովանդակությունը, առաջարկել է համեմատել «փայտյա տուն» և «լավ տուն» բառակապակցությունները:

Եթե մենք օգտագործում ենք «փայտյա» տերմինը, ապա նրա իմաստը հանդիսանում է բոլորի կողմից ընդունված և բոլորի համար միատեսակ, միևնույն «լավ» հատկանիշը այդքան միանշանակ չէ: Տունը կարող է մեկ նպատակի համար լավ լինել, իսկ մեկ ուրիշի համար՝ ոչ հարմար: Այն կարող է հարմար լինել մեկ անձի համար, անգամ միևնույն անձի համար կյանքի տարբեր շրջաններում այդ տունը կարող է լինել կամ լավ, կամ վատ [12]: Արժեքավորող հատկանիշները վերաբերում են փոփոխականին, քանի որ առաջինը տարատեսակ է ընկալվում տարբեր մարդկանց կողմից և ժամանակի ընթացքում կարող է տարատեսակ ընկալվել մեկ անձի կողմից: ՀՀ քրեական օրենսգրքը բովանդակում է բավականին մեծ թվով արժեքավորող հատկանիշներ: Այսպես՝ ՀՀ քր. օր-ի 42-44 հոդվածներում խոսքը հանրության համար վտանգավորության աստիճանին և բնույթին ակնհայտ անհամապատասխանության մասին է, ՀՀ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2021

քր. օր-ի 62 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը կյանքի ծանր հանգամանքների զուգորդման, ՀՀ քր. օր-ի 63 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ ծանր հետևանքներ պատճառելու, 4-րդ կետը՝ հանցագործության մեջ առանձնապես ակտիվ դերի, 11-րդ կետը՝ հանցանքն առանձին դատաւնությանը, տուժողին ծաղրուծանակի կամ տանջանքների ենթարկելով կատարելու, ՀՀ քր. օր-ի 105 հոդվածի 1-ին մասը՝ ծանր վիրավորանքի, ՀՀ քր. օր-ի 110 հոդվածի 1-ին մասը՝ դատան վերաբերմունքի մասին: Համանման հատկանիշներ բովանդակվում են նաև ՀՀ քրեական օրնագրի Հատուկ մասի բազմաթիվ ուրիշ հոդվածներում: Արժեքավորող հասկացության գոյությունը ունի իր ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերը: Այսպես՝ արժեքավորող հասկացությունը հնարավորություն է տալիս առավել մանրամասնորեն հաշվի առնել գործի առանձնահատուկ հանգամանքները, որոնք կարող են հանդես գալ տարբեր ձևով և ունենալ բովանդակության նշանակալի (շոշափելի, զգալի) բազմաձևություն:

Միաժամանակ նրանց առկայությունը չի նպաստում ամբողջովին քրեական օրենսդրության միատեսակ կիրառմանը և մասնավորապես՝ հանցագործության որակմանը: Արժեքավորող հատկանիշների բովանդակության պարզաբանումը, որը պետք է նպաստի իրավակիրառողների կողմին նրանց ըմբռնման միատեսակության ապահովմանը, ձեռք է բերվում տարբեր եղանակներով: Այսպես՝ քրեական օրենքը պետք է ընկալվի նորմատիվային միասնությամբ: Օրինակ՝ ՀՀ քր. օր-ի 2-րդ մասի 4-րդ կետը բովանդակում է այնպիսի որակյալ հատկանիշներ, ինչպիսիք են անզուլուրյալ տուժողի մահը կամ այլ ծանր հետևանքներ առաջացնելը: «Այլ ծանր հետևանքները» հանրորեն վտանգավորության աստիճանով պետք է համադրելի լինեն կատարված արարքին: Պատահական չէ, որ դատական պրակտիկան «այլ ծանր հետևանքներին» է դատում տուժողի ինքնասպանությունը:

Արժեքավոր հատկանիշների միատեսակ ըմբռնմանը նպաստում է արժեքավոր հատկանիշների նպատակասլաց կոնկրետացումը, որն իրականացվում է նրան խիստ որոշակի սահմաններ տալու համար: Նման կոնկրետացման առավել տարածված տեսակը քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածների ծանոթագրություններում նրանց բովանդակության պարզաբանումն է [13]: Այսպես՝ ՀՀ քր. օր-ի 175-րդ հոդվածի 4-րդ մասում պարզաբանված է հափշտակության չափերը՝ մանր չափը, զգալի չափը, խոշոր չափը և առանձնապես խոշոր չափը: Համանման տեսակի օր-ի 132-րդ հոդվածի 5-րդ մաս, 187-րդ հոդվածի 4-րդ մաս, 188-րդ հոդվածի 4-րդ մաս, 189-րդ հոդվածի 4-րդ մաս, 190-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասեր, 191-րդ հոդվածի 2-րդ մաս, 192-րդ հոդվածի 3-րդ մաս, 200-րդ հոդվածի 5-րդ, 202-րդ հոդվածի 4-րդ մաս, 203-րդ հոդվածի 4-րդ մաս, 205-րդ հոդվածի 3-րդ մաս, 206-րդ հոդվածի 2-րդ մաս, 207-րդ հոդվածի 2-րդ մաս, 208-րդ հոդվածի 2-րդ մաս, 215-րդ հոդվածի 5-րդ մաս, 308-րդ հոդված 3-րդ և 4-րդ մասեր, 311-րդ հոդվածի ծանոթագրությունը և այլն:

Անհրաժեշտ է նշել օրենսդրի ձգտումը ճշգրտելու ոչ միայն քանակական, այլ նաև որակական բնույթի արժեքավոր հասկացությունները: Այսպես՝ ՌԴ քր. օր-ի 37 հոդվածում ներքոհիշյալ բովանդակության 2-րդ մասի ավելացումը այն մասին, թե «պաշտպանվող անձի գործողությունները անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցում չի համարվում, եթե այդ անձը ոտնձգության հանկարծակիության հետևանքով չէր կարող օբյեկտիվորեն գնահատել հարձակման վտանգավորության բնույթն ու աստիճանը», ուղղված է իրավակիրառողի հայեցողության նեղացմանը այն հարցի լուծման դեպքում, թե արդյոք պատճառված վնասը ոտնձգության բնույթին և վտանգավորությանն ակնհայտորեն չհամապատասխանող է հանդիսանում, թե՛ ոչ (ՌԴ քր. օր-ի 37-րդ հոդվածի 2-րդ մաս) [14]:

Արժեքավորող հատկանիշների բովանդակությունը առանձին կարգի գործերով բազմիցս պարզաբանվել են ՍՍ ՀՄ, ՌԱՖՍՀ ՌԴ Գերագույն դատարանների, Պլենումների, ՀՀ Գերագույն դատարանի Պլենումի և ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներում:

ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2021

Օրինակ՝ առանձին դաժանության հասկացությունը պարզաբանվել է ՌԴ Գերագույն դատարանի Պլենումի 1999 թվականի հունվարի 27 թիվ 1 «սպանության գործերով դատական պրակտիկայի մասին» որոշման 8-րդ կետում (ՌԴ քր. օր-ի 105-րդ հոդված, ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդված [15]), ինչպես նաև կոնկրետ գործերով որոշումներում:

Բլանկետային են հանդիսանում այն հատկանիշները, որոնց կոնկրետ բովանդակությունը բացահայտվում է իրավունքի այդ ճյուղի կամ ենթաօրենսդրական ակտին վերաբերող օրենքում: Հանցակազմի բլանկետային հատկանիշը արտաքինից կայուն է, բայց բովանդակությամբ կարող է էապես փոխվել՝ կապված այն օրենքի կամ ենթաօրենսդրական ակտի փոփոխությունից, որի վրա հղում է պարունակվում քրեական օրենքում:

Քրեական օրենքում նախատեսված բլանկետային դիսպոզիցիաների մեծամասնությունը հանդիսանում են փակ բլանկետային դիսպոզիցիաները: Այդպիսիք նյութական հանցակազմերով դիսպոզիցիաներն են, որոնցում օբյեկտիվ կողմի հատկանիշների մեծամասնությունը նկարագրված է հենց քրեական օրենքում: Այլ ճյուղերի նորմատիվ ակտերը, կապված այդպիսի բլանկետային դիսպոզիցիաների հետ, միայն ճշգրտում են այն բովանդակությունը, որն ընդհանուր ձևով արդեն նշված է քրեական օրենքում [16]: Փակ բլանկետային դիսպոզիցիաները առկա են, օրինակ, ՀՀ քր. օր-ի 157, 230, 242 հոդվածներում: Ձևական հանցակազմում բլանկետային դիսպոզիցիան, երբ օբյեկտիվ կողմի հատկանիշների մեծամասնության բովանդակությունը մանրամասնվում է այլ իրավունքի ճյուղի նորմատիվ ակտերի օգնությամբ, կոչվում է բաց բլանկետային դիսպոզիցիա: «Բաց բլանկետային դիսպոզիցիաների դեպքում չի բացառվում քրեաիրավական արգելքի փոփոխության հնարավորությունը՝ նորմատիվ ակտերում փոփոխություն կատարելու միջոցով, որոնց հետ նա կապված է: Օրինակ՝ սպորինի որսի հանցակազմում, որը կատարվել է բնության հատուկ պահպանվող տարածքներում (ՀՀ քր. օր-ի 294-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ), պրակտիկորեն օբյեկտիվ կողմի բոլոր հատկանիշները որոշված են ենթաօրենսդրական ակտերում (որսի կանոններում)» [17]:

Անհրաժեշտ է նշել բլանկետային դիսպոզիցիաների օգտագործմամբ որակման հետևյալ պրոբլեմները: Բլանկետային դիսպոզիցիաներով մի շարք նորմերում հղում է արվում ոչ թե կոնկրետ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի վրա, այլ ամբողջ իրավական ինստիտուտի վրա: Օրինակ՝ ՀՀ քր. օր-ի 149-րդ հոդվածը խոսում է ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելու, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու մասին, որոնք սահմանված են ընտրությունների և հանրաքվեների մասին օրենսդրությամբ, որը ենթադրում է ընտրությունների օրենսդրության իմացությունը: Այսպիսի դիսպոզիցիաների կիրառման դեպքում իրավակիրառողը պետք է գիտենա հասարակական հարաբերությունների համապատասխան ոլորտը կարգավորող, համալիրում իրավական ինստիտուտ կազմող, նորմատիվ ակտերի ամբողջ համակցությունը և կարողանալ վերլուծել այդ նորմերը ինչպես առաձին, այնպես էլ համակցությամբ: Հենց օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտերը, որոնց վրա հղում է տրվում բլանկետային դիսպոզիցիաներում, նույնպես հանդիսանում են անկախուն, և հանցագործության որակման դեպքում իրավակիրառողը պարտավոր է իմանալ այդ ակտերում արված բոլոր փոփոխությունները և լրացումները ու կարողանալ նորմը գնահատել օրենքի հետադարձ ուժի տեսանկյունից:

Այլ օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը, ինչպես արդեն նշվեց, հանցակազմի հատկանիշներ չեն պարունակում, այլ միայն մանրամասնում են այն հատկանիշները, որոնք նշված են քրեական օրենքում:

Բացառություն է կազմում ՀՀ քր. օր-ի 266-րդ հոդվածի 5-րդ մասում բովանդակող ծանոթագրության դրույթը, որում ասված է, որ սույն գլխում թմրամիջոցների կամ հոգե-

ներգործուն նյութերի մանր, խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտի պետական կառավարման իրավասու մարմինը: Այսպիսով՝ ՀՀ քրեական օրենսգրքի այս գլխի համապատասխան հոդվածների շրջանակներում մանր, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, որոնք հանդիսանում են կոնկրետ հանցակազմերի պարտադիր հատկանիշները և որոշում են արարքի քրեահակաիրավական բնույթը, սահմանվում են ոչ թե օրենսդիր մարմնի, այլ գործադիր իշխանության կողմից: Տվյալ դեպքում տեղի է ունենում իշխանության մարմինների լիազորությունների բաժանման սկզբունքի խախտում:

Բլանկետային դիսպոզիցիաներով նորմերի առկայությունը մի կողմից ապահովում է քրեական օրենքի տեքստի խնայողությունը, նաև օրենսդրին ազատում է այլ օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում բացահայտված հատկանիշները քրեական օրենքում մանրամասնելուց, հանցագործություն որակելուց: Մյուս կողմից քրեական օրենքը ենթաօրենսդրական ակտերով փոխարինելու, քրեական պատասխանատվության ներգրավվող անձի իրավունքների խախտման վտանգ է ստեղծում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Куринов Б.А. - Научные основы квалификации преступлений. М., 1984, стр.27.
2. Кудрявцев В.Н. – Общая теория квалификации преступлений. М., 1999, стр.60; Парог А.И - Квалификация преступлений по субъективным признакам. СПб: 2003. стр. 44.
3. Парог А.И. - Квалификация преступлений по субъективным признакам. СПб: 2003. стр.45.
4. Гаухман Л.Д. - Квалификация преступлений: закон, теория, практика. М., 2005, стр. 16.
5. Гаухман Л.Д. - Квалификация преступлений: закон, теория, практика. М., 2005, стр. 18.
6. Пикуров Н.И.- Действительные и мнимые проблемы бланкетной диспозиции уголовного закона //Уголовное право: стратегии развития в XXI веке. М., 2005, стр. 72.
7. Парог А.И. - Квалификация преступлений по субъективным признакам. СПб: 2003. стр.19.
8. Кудрявцев В.Н. – Общая теория квалификации преступлений. М., 1999, стр.104-107; Куринов Б.А. – Научные основы квалификации преступлений. М., 1984, стр.36.; См.: Гаухман Л.Д. - Квалификация преступлений: закон, теория, практика. М., 2005, с.249-265; Сабитов Р.А. Указ. Соч., стр. 54-55.
9. Гаухман Л.Д. - Квалификация преступлений: закон, теория, практика. М., 2005, стр.257.
10. Кудрявцев В.Н. – Общая теория квалификации преступлений. М., 1999, стр.107.
11. Кудрявцев В.Н. – Общая теория квалификации преступлений. Указ. Соч. М., 1999, стр.108-123;
12. Кудрявцев В.Н. – Общая теория квалификации преступлений. М., 1999, стр.116.
13. Кобзева Е.В. - Использование оценочных признаков в уголовном Кодексе России. 1996г. Итоги и перспективы // 5 лет действия УК РФ: итоги и перспективы. М., 2003. стр.184.
14. Грачева Ю.В. – Судейское усмотрение в уголовном праве: прошлое, настоящее и будущее // Уголовное право: стратегия развития в XXI веке. М., 2005, стр. 92.
15. ВВС РФ. 1999, № 3
16. Пикуров Н.И.- Действительные и мнимые проблемы бланкетной диспозиции уголовного закона //Уголовное право: стратегии развития в XXI веке. М., 2005, стр. 72.
17. Пикуров Н.И.- Действительные и мнимые проблемы бланкетной диспозиции уголовного закона //Уголовное право: стратегии развития в XXI веке. М., 2005, стр. 73.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Քրեական օրենքը և հանցակազմը որպես հանցակցությամբ կատարված
հանցագործությունների որակման հիմք
Յուրի Հարությունյան

Սույն հոդվածում քննարկվում են հանցագործությունը որակելու հիմքերի խնդրահարույց հարցերը: Քրեական օրենսդրությունը և հանցակազմը հանցագործությունները որակելու հիմք են, և հեղինակը կենտրոնացել է հանցակցությամբ կատարված հանցագործություններում դրանց կիրառման առանձնահատկությունների վրա: Հոդվածի նպատակն է վերլուծել և ընդհանրացնել քրեական հանցակազմի և հանցակազմի կիրառման պրակտիկան հանցակցության միջոցով կատարված հանցագործությունները որակելիս: Այս նպատակի իրագործումը հնարավոր է մի շարք խնդիրների լուծման միջոցով. 1. քրեաիրավական նորմերի դիսպոզիցիաների համալիր վերլուծությունը և դրանց ազդեցությունը հանցագործության որակման վրա, 2. հանցագործության հանցակազմի հատկանիշների և տարրերի տարանջատումը, 3. հանցագործության հանցակազմի և դիսպոզիցիայի հարաբերակցությունը, 4. հանցագործության հանցակազմի հատկանիշների դասակարգումը և դրանց ազդեցությունը հանցագործության որակման վրա: Ուսումնասիրության արդյունքում հեղինակը եկել է այն եզրահանգման, որ այլ նորմատիվ իրավական ակտեր չեն պարունակում հանցակազմի տարրեր, իսկ բլանկետային դիսպոզիցիաների առկայությունը էապես բարդացնում է հանցագործությունների որակման գործընթացը և ստեղծում ենթաօրենսդրական ակտերում պարունակվող քրեական նորմի/երի/ փոխարինման սպառնալիք:

РЕЗЮМЕ

Уголовный закон и состав как основа квалификации преступлений,
совершенных в соучастии
Юрий Арутюнян

Ключевые слова: уголовный закон, диспозиция, состав, квалификация преступлений, соучастие.

В данной статье рассмотрены фундаментальные вопросы основания квалификации преступления. Уголовный закон и состав преступления являются основанием для квалификации преступлений, и автор акцентирует внимание на особенностях их применения при совершении преступления в соучастии. Цель статьи заключается в анализе и обобщении практики применения уголовного закона и состава преступления при квалификации преступлений, совершенных в соучастии. Реализация этой цели достигается посредством решения ряда задач:

1. комплексный анализ диспозиций уголовно-правовых норм и их влияние на квалификацию преступлений;
2. разграничение признаков и элементов состава преступления;
3. соотношение диспозиции и состава преступления,
4. классификация признаков состава преступления и их влияние на квалификацию преступления.

В результате проведенного исследования автор пришел к выводу, что иные нормативно-правовые акты не содержат признаков состава преступления, наличие бланкетных диспозиций значительно затрудняет процесс квалификации преступлений и создает угрозу замещения уголовных норм нормами, содержащимися в подзаконных актах.

SUMMARY

Criminal Law and Composition as the Basis for Qualifying Crimes Committed with Complicity
Yuri Harutyunyan

Key words: criminal law, disposition, composition, qualification of crimes, complicity.

This article discusses the fundamental issues of the basis for qualifying a crime. The criminal law and the corpus delicti are the basis for qualifying the crimes, and the author focused on the peculiarities of their application when committing a crime with complicity. The purpose of the article is to analyze and generalize the practice of applying the criminal law and corpus delicti when qualifying crimes committed with complicity. The implementation of this goal is achieved by solving a number of problems:

1. Comprehensive analysis of dispositions of criminal law norms and their impact on the classification of crimes,
2. Differentiation of signs and elements of corpus delicti,
3. Correlation of disposition and corpus delicti,
4. Classification of signs of corpus delicti and their influence on the qualification of a crime.

As a result of the study, the author came to the conclusion that other regulatory legal acts do not contain signs of corpus delicti, the presence of blanket dispositions significantly complicates the process of qualifying crimes and creates a threat of substitution of criminal norms and norms contained in bylaws.